



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՄՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵԼՈՎ՝

### **ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԸ ՏԵՐ ՉՕՐԻ ՄԵՋ ԽԱԶՈՎ ՉՕՐԱՑԱԾ՝ ՇԱՐԵՑԱՒ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿՆ ՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ**

*ՊԱՏԳԱՄԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ*

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Արեւմտեան մեր Թեմին շնորհած հովուապետական այցելութեան վերջին օրը սկսաւ աղօթքով ու Ս. Պատարագով՝ Էնսիւոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ: Շաբաթակիցքին, Վեհափառ Հայրապետը նոյն համալիրը այցելած էր Ազգ. Ֆերահեան Վարժարանի աշակերտներուն ու դաստիարակներու հետ հանդիպումի համար: Կիրակի, 23 Հոկտեմբերի առաւօտուն, Նորին Ս. Օծութիւնը նոյն վայրին մէջ հանդիսապետեց Ս. Պատարագին եւ ներկաներուն ուղղեց Գիւտ Խաչի տօնէն ներշնչուած իր պատգամը:

Ինչպէս Հայրապետին այցելած բոլոր եկեղեցիներն ու դպրոցները, նոյնպէս ալ Ս. Նահատակաց եկեղեցւոյ շրջափակը տօնական մթնոլորտի մէջ էր Կիրակի առաւօտուն: Հ.Ս.Ը.Մ.ի սկաւառներն ու արեւոյշները, գայլիկներն ու մրջնիկները Ֆերահեան վարժարանի բակին մէջ զոյգ շարք կազմած՝ պատուի կանգնած էին հայրապետական շքախումբին սպասումով:

Ս. Պատարագը սկսած էր առաւօտուն: Պատարագիչն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան երեց անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան: Ս. Սեղանին կը սպասարկէին միաբան հայրեր՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան ներկայացուցիչներու ուղեկցութեամբ, Վեհափառ Հայրապետը եկեղեցի ժամանեց ժամը 11ին եւ դիմաւորուեցաւ Ս. Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան, շրջանի միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներուն կողմէ: Դահլիճին մէջ, տեղի ունեցաւ կարճատեւ ու մտերմիկ հանդիպում մը: Վեհափառ Հայրապետը հարցումներ ուղղեց շրջանի հայկական կեանքին մասին: Ազգ. Վարչութեան, հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան, ՀՕՄի ու Հ.Ս.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղերուն ու Հ.Յ.Դ. «Ռոստոմ» Կոմիտէի ու եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցի

ներկայացուցիչները յաջորդաբար տուին սեղմ տեղեկություններ: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց կազմակերպ աշխատանքներն ու միաւորներուն միջեւ գործակցութիւնը: Ան մասնաւորաբար վեր առաւ Հայ Դպրոցին հայակերտումի դերը եւ շեշտեց, որ հայ աշակերտը պէտք է նիւթական պատճառներով զրկուի հայկական ուսումնարանի բարիքներէն, մեր եկեղեցիները ամենուրեք աջակից են ու պէտք է ըլլան Հայ Դպրոցին: Առաջնորդ Սրբազանը հաստատեց, որ այդ է նաեւ մեր Թեմին սկզբունքը:

«ԽԱԶԻ ՈՒՂԻՆ»

Վեհափառ Հայրապետը, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները եկեղեցի ուղղուեցան «Ողջոյն»ի պահուն: Ս. Պատարագը տեղի կ'ունենար «Աւետիսեան» սրահին մէջ: Ժողովականութեան, միութեանց ու կազմակերպութեանց կողքին, ներկայ էին բարերարներ, Ֆերահեան վարժարանի տնօրէն Տիար Ժան Գոսաբեան եւ բազմահարիւր հաւատացեալներ:

Սրահի մուտքին, Յ.Մ.Ը.Մ.ականներու շարքը կը շարունակէին եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները, որոնք կը զատորոշուէին իրենց տարազներով:

Քարոզի պահուն, Առաջնորդ Սրբազանը խօսք առնելով՝ հակիրճ կերպով անդրադարձաւ հովուապետական այցելութեան իրերայաջորդ հանգրուաններուն, նշելով, որ Նորին Ս. Օծութեան շնորհաբեր այցելութիւնը խրախոյս եւ քաջալերանք հանդիսացած է մեր Թեմի հաւաքական կեանքի կենսաւորման, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի առաքելութեան հանդէպ հաւատարմութեան վերահաստատման ու նոր հորիզոններու բացման: Ապա, հրաւիրեց Վեհափառ Հայրապետը՝ ուղղելու իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ մեծ ընտանիքն ու անոր ճամբով՝ Զալիֆորնիոյ հայութիւնը՝ անխտիր: Ան դրուատիքով խօսեցաւ Առաջնորդ Սրբազանին, Ազգ. Վարչութեան ու անոնց բոլոր գործակիցներուն մասին, որոնք գործունեութեան եւ արդիւնքին ականատես եղած է այս այցելութեան առիթով: Ան նկատել տուաւ, որ աշխատանքի մը կամ անձերու գնահատման չափանիշը տեսքին կամ հանգամանքի ու նիւթական կարողութեան մէջ չէ, այլ տրամադրուած ծառայութեան տարողութեան մէջ, որովհետեւ նոյնիսկ Զրիստոս այս չափանիշը գործնապէս մատնացոյց ըրած է իր ծառայութեամբ ու մարդկութեան նուիրումով:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ այսօր, Գիւտ Խաչի տօնն է. ան կանգ առաւ քրիստոնէաներու եւ յատկապէս մեր ժողովուրդի կեանքին մէջ խաչի դերին ու պատգամին: Զրիստոսէ առաջ, ըսաւ Վեհափառ Հայրապետը, խաչը բացասական իմաստ եւ խորհրդանիշ էր, անոր վրայ կը բարձրացուէին չարագործներ ու ընկերութեան կեանքէն դուրս նետուածներ, մինչդէռ Յիսուս եկաւ իր արիւնով սրբագործելու խաչը, զայն վերածեց փրկութեան ու մահուան վրայ յաղթանակի խորհրդանիշի: Այս իմաստով ալ, խաչը միայն մեր եկեղեցիներուն գմբէթները, խորանները կամ մարդոց կուրծքը զարդարող նշան չէ, այլ դարերէ ի վեր ուղի է արդար կեանքի, քրիստոնէական հաւատքի եւ պատգամներուն հաւատարմութեան, սիրտն է

քրիստոնեութեան ինքնութեան ու առաքելութեան: «Մարդուն փրկչագործութեան համար իր արիւնը խաչին վրայ թափելով՝ Քրիստոս նոր ուղի մը ցոյց տուաւ, եւ մահուան յաղթելով՝ մարդկութեան համար յոյսի ու յաղթանակի ճամբայ բացաւ», շեշտեց Վեհափառ Հայրապետը, յիշեցնելով, որ մեր դարաւոր պատմութեան մէջ ալ, խաչը տառապանքի, յաղթանակի ու հաւատարմութեան խորհրդանիշ եղած է Հայաստանէն մինչեւ Արցախ ու սփիւռքեան օճախներ: «Մեր ժողովուրդը խաչին զօրութեամբ դիմագրաւեց փոթորիկներն ու յաղթեց չարիքին, պահպանեց իր ինքնութիւնը. մեր ժողովուրդը Տէր Չոր քշուեցաւ, սակայն խաչով զօրացած՝ կերտեց իր յարութիւնը», շեշտեց Հայրապետը ու յորդոր ուղղեց, որ շարունակենք մեր կեանքերը լուսաւորել խաչին ճառագայթներով, որովհետեւ չկայ փրկութիւն առանց խաչի, անիկա է նաեւ մեր ժողովուրդին վերածննդեան ու յաղթական երթի ճամբան:

Ս. Պատարագի աւարտին, Կիրակնօրեայի աշակերտ մը ողջոյնի խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, որ 2011 տարին ձօնած է Հայ Մանուկին, եւ վերանորոգեց մեր եկեղեցւոյ ու ազգային աւանդներուն հաւատարմութեան ուխտը: Ապա հնչեցին «Ի վեհ Բարձանց»ն ու «Կիլիկիա»ն:

Տեղի ունեցաւ աջահամբոյր. ներկաները ստացան Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը ու պատմական օր մը ըմբռնեցին ըլլալու բաւարարութեամբ վերադարձան տուն:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I DELIVERS PONTIFICAL MESSAGE AT HOLY MARTYRS CHURCH IN ENCINO**

On Sunday, October 23, 2011, the last day of the Pontifical Visit of His Holiness Catholicos Aram I began with Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino presided over by the Pontiff. During the Liturgy, His Holiness delivered his Pontifical message on the Feast of the Discovery of the Holy Cross.

His Holiness arrived at the Church accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was led to the reception hall for a meeting with the Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, and representatives of local chapters of sister organizations. Each gave a brief overview of their endeavors. His Holiness commended them all for their service, and speaking of Armenian Schools, stated that Armenian children should not be withheld from Armenian Schools for financial reasons and that our Church must lend its full support to our schools.

His Holiness was then led to "Avedissian" Hall where the service was being held. The courtyard was lined with Homenetmen scouts in honor of His Holiness.

The celebrant was H.E. Archbishop Yeprem Tabakian. Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian assisted at the altar.

Prior to the Pontifical message, the Prelate reflected on the Pontifical Visit stating that the visit of His Holiness served as an encouragement and

inspiration to our community and the dawn of new horizons. He then invited His Holiness for his message.

His Holiness at first commended the Prelate, Executive Council, and affiliated bodies for their devoted service, which he witnessed during his visit.

Speaking on the Feast of the Discovery of the Holy Cross, which coincided with that day, His Holiness spoke of the message of the Cross in the lives of our people. His Holiness stated that before Christ, the cross had a negative connotation, it was something on which criminals were crucified. However, our Lord Savior Jesus Christ shed His blood on the Cross and cleansed the Cross, transforming it into a symbol of redemption and salvation. The Cross is not merely a decoration atop our Churches and altars, it is the path to righteousness, the heart of Christian identity. By shedding His blood on the Cross for the salvation of mankind, Jesus Christ opened a new path for us of hope and victory, stressed His Holiness. Armed by the power of the Cross, our people overcame countless struggles and persevered, preserving our identity. We were sent to Der Zor, but strengthened by the spirit and message of the Cross, we were resurrected. His Holiness concluded by calling on the faithful to continue to illuminate their lives by the light of the Cross because there is no salvation without the Cross and the Cross is our path to rebirth and triumph.

At the conclusion of Divine Liturgy, a Sunday School student addressed His Holiness, reaffirming their pledge to remain faithful to our religious and national heritage and values. After the Cilician and Pontifical anthems, "Achahampouyr" followed where faithful had the opportunity to receive the blessings of His Holiness.